

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից).
Յայտարարությունները ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1900 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-ՐԴ ՏԱՐԻ)

ԴՐԱՎՈՐՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն
ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՄԱՆՇՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե թ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւ ռ օ պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ օ կ ա յ ա տ ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՍՀԱՐԱՏԱՆԸ (Բաղարայան և Բարձրակայան փողոցների
անկիւնը):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակ-
ներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարությունները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Շ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Չ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաձեռնութեան ընդարձակում.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Սիմֆերոպո-
լից. Նամակ Ղարաբաղից. Նամակ Խուս-
թաբուրից. Նամակ Խմբագրութեան. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ուսանողները:

ՆԱԽԱՅԵՆՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդեցին,
որ դիտաւորութիւն կայ այն տեղերում,
ուր գեմատիւն չէ մտցրած, ժողովրդական
դպրոցներ բանալու և պահպանելու
հոգսը յանձնել նահանգական վարչութեան
և գիւղական գործերի ատեսանին: Այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Վերջերս մեր մամուլի մէջ շատ է գրվում
հայ ուսանողների և համալսարանաւարտների
պակասութեան մասին: Միշտ դանդաղա-
վում են, որ ուսանողները համալսարանում
չառք են պարտադրում իրանց մասնագիտու-
թեանը, հասարակական գործերով ամենեւին
չեն հետաքրքրվում, աշխատում են մի կերպ
աւարտել ու փող դադել, նիւթականի մասին
չառք են մտածում, գաղափարական չեն: Իսկ
համալսարանաւարտները յետոյ՝ ով քիչ թէ
չառք գաղափարական էր առաջ, բոլորը մոռա-
նում է և բացի գրգռանքից, չառք պանդոնից ու
աջող ամուսնութեանից՝ ուրիշ բան չէ ընդու-
նում. փոխանակ իր չընթացողների մէջ կըր-
թութիւն տարածելու նա ինքը կնխարկվում է
նրանց ազդեցութեանը և հակվում դէպի վատը
և այլն...

Այո, մեր հասարակութիւնը դանդաղում է
և մեղադրում, բայց դրանով չառք է օգ-
նում գործին: Այդ բոլոր դանդաղները ու մե-
ղադրանքը ճիշդ են, բայց նախ քան մեղա-
դրել, տեսնենք՝ թէ որքան յանցաւոր են
մեղադրեալները:

Եւ աւարտել եմ կովկասի դաւառական գիւ-
նագիտանքի մէջը և լաւ ծանօթ եմ այնտեղի
աշակերտների հետ: Ունեմ ծանօթ գիւնագիտա-
ներ, ունեմ այդ գիւնագիտանաւարտներ (բիւլետներ,
իւրաքանչիւր), որոնք նոյն գիւնագիտան են
վերջացրել: Դիտելով նրանց կեանքի պայման-

տօնեաների անձնական բարի ձգտումնե-
րից և համակրութիւնից էր կախված
նպատակ դպրոցական գործի զարգացմանը
զաւառներում:

Դպրոց բանալու նախաձեռնութեան ըն-
դարձակումը կարող է նպաստաւոր հետե-
ւանքներ ունենալ: Վարչական մարմնի
վրա դրած պարտականութիւնը կը զրգի-
ոյ միայն պահպանել ամեն մի լուսաւոր
ձգտում, որ երևան կը գայ գիւղական
չըմանում դպրոցի վերաբերութեամբ, այլ
և խրախուսել, որ դպրոց հիմնելու գա-
ղափարը իրականութեան մէջ տարածվի
ընդարձակ ծաւալով:

Որքան էլ համակրութիւն գտնի դեմ-
սովօրի գաղափարը բարձր կառավարչական
չըմանութեամբ, զարմեալ տարիներ են հար-
կաւոր, մինչև որ նա ստանայ իրազեկու-
թիւն կեանքի մէջ. իսկ մինչև այդ բարե-
յաջող ժամանակի հասնելը կարելի է, որ
դպրոցական գործը զարգանայ և կանգ
չառնի: Մեր երկիրը Ռուսաստանի այն
մասերից մէկն է, ուր դպրոցական գործը
զաւառներում դեռ թոյլ է և կարող է
խրախուսանքի և պաշտպանութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Արեւմտեան հայերը վաղուց են սկսել խօսել
ջղափութեան մասին. նշանակում է, որ մեր
դարի այդ հիւանդութիւնը միայն քաղաքա-
կրթված, եռուն ու շարժուն ազգերը չէ վա-
րակի, այլ և մեզ պէս մանուկ (ի հարկէ,
քաղաքակրթութեան տեսակետից), քնաթա-
թախ մի փոքրիկ ժողովուրդը: Ո՞րտեղից եկաւ
և ինչպէս մտաւ մեր մէջ այդ ախտը: Հայերը
մեծ քանակութեամբ ապրում են այնպիսի տե-
ղերում, որոնք շատ մօտ են քաղաքակրթու-
թեան կենտրոններին, անաղարտ չիվում են
նրանց հետ: Այդ պատճառով շատ հասկանալի
է, որ Կ. Պոլսի կամ Զմիւռնիայի հայութիւնը
արդէն սաստիկ դանդաղում է ջղափութեան
դէմ. թաթարա-ևւրօպական հովերին ենթարկ-

թէ ինչպիսի կեանք է վարում գիւղացի ա-
շակերտը և ինչպիսի պայմանների մէջ է
գտնվում նա գիւնագիտում— դրա մասին մի
փոքր յետոյ: Իսկ այժմ նայենք վաճառականի
որդու կեանքի պայմաններին:

Վաճառականը, որ գրի «սեւ ու սպիտակը»
հազիւ է ջուկում և որ մի կերպ փող է դա-
դել, տալիս է իր որդուն թեմական դպրոց,
որ որդին հայերէն սովորի. շատերը այդ էլ
չեն անում: Երկու տարի չանցած՝ հանում է
որդուն հայոց դպրոցից—բաւական է որքան
հայերէն սովորեց—և մտցնում է գիւնագիտ:
Որդին դասերից զատաւ ժամանակը մէկ-մէկ
յաճախում է հօր խանութը և ինչ է տեսնում
ու սովորում այնտեղ. նա տեսնում է ինչպէս
իր հայրը աշխատում է խաբել առողիքն, ինչ-
պէս գործակատարները լաւ ապրանքը փոխում
են և վաճում են դնում տեղը, ինչպէս աշխա-
տում են աւելի շատ փող կորզել առողիքից,
ինչպէս սուտ երգում են, ինչպէս հայոցում
են և այլն...

Երեւել է ինչ մոռանալ հետեւեալ
դէպքը, որին ներկայ էի. ամառը մի ինչ որ
գիւղացի մտաւ ծանօթիս խանութը և մե-
ղաքանայ թաղիկնակ (խաւ բաղադրել) խնդրեց:
Ինքեցին մի քանի տեսակ ազդեցիկ. գիւղա-
ցին չէր հաւանում և խնդրում էր, որ լաւ
տան. նրա մօտ կանգնած էր խանութպանի 7
տարեկան տղան. երեխան, ձեռք տալով թաղ-
իկնակին, միաժամ կերպով արտասանեց՝ «կա-
սեւ թուղթ լինի»: Գիւղացին առանց առնելու
հետաքրքաւ երեխան իր պիւմիս նկատողու-
թեան համար մի լաւ ապտակ կերաւ իր դաս-
տիարակից: Ի հարկէ, բացառութիւններ կան,
իմ ժամանակ բարձր դասարանի աշակերտներն
էլ էին գնում խանութ՝ հօրն օգնելու տնեւրին
կամ ամառը. բայց հիմա կարծեմ այլ ևս չեն
գնում: Մտնելով գիւնագիտ, ձմեռը սովորում

Գրականութիւնը որ նոյն իսկ հոգին է ժո-
ղովուրդի մը, ամէնէն մեծ տեղը կը զբաւ-
է այս պատճառներուն մէջ: Որոշորդապաշտու-
թիւնը (mysticisme) սեւաւաղձութեան կրնայ
յառաջանալ, ապօրէն տուրքով մը պաշ-
տուած բանի մը զօր չի կրնար վայելել:
Իրապաշտներէն և բնապաշտներէն մեծ մա-
սը ձգնելով ցոյցանել իրենց գործերուն մէջ
ջղափն տիպեր իրենց իսկական վիճակին
մէջ, ականաջ ջղափնութեան ենթակայ կըլ-
լան, և ընթերցմամբ հետզհետէ ենթակայ
կընեն ուրիշներ ալ: Եւ իրաւամբ ժամանակա-
կից վկայաստաններն ու թատերագրութեան
մեծ մասը այդ ակտիւ կը պարտին իրենց
համբաւը, իրենց բոլոր գրելու կարողութիւ-
նը, և հետեւաբար նոյն իսկ իրենց ոճը: Զօ-
րա, Յիզպէտ, Մօզասան, Միոպօ, Իպպէն,
Վալիէր և ուրիշ շատեր, պատրաստելէ ա-
ռաջ իրենց երկերը, մասամբ կամ բոլորովին
ուսեցած են այդ դարավերջի ակտիւն. և

է ուսումնարանում, իսկ ամառը խանութում
է անցկացնում վաճառականի որդին: Եթէ
գիւղացու որդին ժառանգել է իր հօրից ֆի-
զիքական ոյժ, վաճառականի որդին, խանու-
թում մեծանալով, իր ծնողներից ստանում է
վաճառականական ձգտումներ: Ահա թէ ինչ-
պիսի պայմաններում են գտնվում մեր աշա-
կերտները գիւնագիտ մտնելուց առաջ, Բնու-
թիւնը և կեանքը պատրաստել են մէկին ֆի-
զիքական աշխատանքի համար, իսկ միւսին
վաճառականութեան համար. բայց չէ, մեր
ծնողները ուզում են ընտելութեան հակառակ.
նրանք ցանկանում են, որ իրանց որդին ին-
ժենէր, բժիշկ, փաստաբան լինի...

Եւ հաւայ օրվանից սկսվում է մեր աշա-
կերտների ամանանքը: Մի երկու տարի հայոց
դպրոցում կաթալուց յետոյ, վաճառականի
կամ գիւղացու որդին մի քանի ամիս կամ մէկ-
երկու տարի պատրաստվում է գիւնագիտին
համար. հէնց որ մի փոքր սովորում են ռու-
սերէն, մտնում են գիւնագիտան. դրա հետեւան-
քը այն է, որ մեր գիւնագիտները ոչ կարգին
ուսանել են գիտեն, ոչ էլ հայերէն—ինչ ևս ա-
ռում, հայերէն բոլորովին էլ չը գիտեն: Այդուհե-
ղից սկսվում է աշակերտի բնաւորութեան փո-
շանալը—սովորել ամեն ինչ թերի և կիսատ:
Հազիւ հազ երեխան ռուսերէն երկու բառ է
կազմում, նրան ստիպում են ըստիներէն, իսկ
մի երկու տարուց յետոյ էլ յունարէն սո-
վորել: Առաջէք խնդրեմ, պատրաստ են դրանք
այդ և ուրիշ լեզուներն ու գիտութիւններն սո-
վորելու համար: Մենք կասենք, որ գիւղացու
և վաճառականի որդիքը իրանց կազմվածքով,
իրանց ուղեղով բոլորովին պատրաստ չեն.
նրանք չեն համապատասխանում չընթացող
պայմաններին, դրանք բոլորովին այլ բանի
համար են ծնված: Այդ աշակերտների ծնողնե-

